



**Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ИМЕНИ В. БРЮСОВА
BRUSOV STATE UNIVERSITY**

**ԲԱՆԲԵՐ
Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ВЕСТНИК ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА ИМЕНИ
В. БРЮСОВА
BULLETIN OF BRUSOV STATE UNIVERSITY**

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

ЛИНГВИСТИКА И ФИЛОЛОГИЯ

LINGUISTICS AND PHILOLOGY

1(66)

**Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
«ԼԻՆԳՎԱ» ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ**

ԵՐԵՎԱՆ - 2023

**ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ ԿԵՐՊԸ
(ՅՈՒՐԻ ԼՈՏՄԱՆԻ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅԱՆ
ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈ)**

ՄԿՐՏԻՉ ՄԿՐՏՉՅԱՆ

Համառոտագիր

Սույն հոդվածում ներկայացվում է Տարտու-մոսկովյան նշանագիտական դպրոցի համահիմնադիր նշանագետ, մշակութաբան և բանասեր Յուրի Լոտմանի աշխատություններում «հաղորդակցություն» հասկացության դրսևորումները թարգմանաբանական լույսի ներքո: Մասնավորապես, համադրության միջոցով անդրադարձ է կատարվում Յուրի Լոտմանի վերջին երկու գրքերում՝ «Внутри мыслящих миров» (2014 [1990]) և «Культура и взрыв» (1992) «հաղորդակցություն» հասկացության ձևակերպումներին: Այս հոդվածում փորձ է արվում ոչ միայն ցույց տալու «հաղորդակցություն» հասկացության առանձնահատկությունները Յուրի Լոտմանի աշխատություններում, այլ նաև այդ հասկացության ձևավորմանը նպաստող տեսությունները, ինչպես նաև ընդգծվում է այդ հասկացության յուրահատկությունը, նմանություններն ու տարբերությունները՝ Ֆերդինանդ դը Սոսյուրի, Ռոման Յակոբսոնի «հաղորդակցություն» հասկացության տեսություններից: Հոդվածում մանրամասն քննվում են Լոտմանի առաջարկած հաղորդակցության «Ես-Նա» և «Ես-Ես» հաղորդակցական կաղապարները, դրանց առանձնահատկությունները, ինչպես նաև այդ հաղորդակցական կաղապարների կիրառության հնարավոր շրջանակը: Այստեղ կարևորվում են ինչպես հաղորդակցության մեջ երկխոսության ու թարգմանության գործոնը, այլ նաև ինքնահաղորդակցության ունեցած դերն ու դրսևորման հնարավոր ձևերը: Մասնավորաբար, քննելով թարգմանությունը որպես հաղորդակցություն դիտարկող որոշ տեսություններ, ընդգծվում է Լոտմանի մոտեցումը խնդրին, և առաջ է քաշվում այն դրույթը, որ հաղորդակցությունը Լոտմանի համար թարգմանության տարատեսակ է, թարգմանության մի ուրույն դրսևորում, դրա անքակտելի մի մասնիկը:

Հիմնաբառեր՝ Հաղորդակցություն, Յուրի Լոտման, ինքնահաղորդակցություն, թարգմանություն և մշակույթ, Տարտու-մոսկովյան նշանագիտական դպրոց:

Ներածություն

Ակնհայտ է, որ հաղորդակցությունը գործընթաց կամ միջոց է՝ մերձեցնելու հակադիր կողմերը, ինչպես նաև պահպանելու կապը երկու կամ ավելի կողմերի միջև: Սակայն այլ հարց է, թե դա ինչպես է կատարվում: Հաղորդակցությունը ուսումնասիրվել և նկարագրվել է տարբեր գիտակարգերի կողմից, և յուրաքանչյուր գիտակարգ փորձում էր ցույց տալ, թե ինչպես է հաղորդակցությունը տեղի ունենում տվյալ գիտակարգի շրջանակներում:

Հաղորդակցություն-ը բառարանային բացատրություններում նկարագրվում է իբրև շփում՝ օգտագործելով բնական լեզուն, կապի միջոցները, մարմինը և այլն: Օրինակ, Պատրիկ Շարոդոն ու Դոմինիկ Մենզընոն կարծում են, որ «Հաղորդակցությունը մարդկանց թույլ է տալիս հարաբերություններ հաստատել միմյանց հետ, որը նրանց դրդում է հաշվի առնել, թե ինչն է նրանց տարբերում և միավորում՝ այդպիսով ստեղծելով հոգեբանական և հասարակական կապեր» (2002, p. 109):

Պետք է ավելացնել, որ հաղորդակցության միջոցներից է նաև թարգմանությունը, որը կարծես թե ինքըստինքյան հասկանալի է, քանի որ մեկ կամ մի քանի լեզուների միջոցով փորձ է արվում մերձեցնելու, ծանոթացնելու և փոքրացնելու հակադիր կողմերի միջև եղած մշակութային, լեզվական, նշանագիտական անջրպետը: Ավելին, նույնիսկ գիտակցելով այն փաստը, որ թարգմանությունը հաղորդակցության տարատեսակ է, դժվար է գտնել թարգմանության բնագավառում մի այնպիսի աշխատություն, որը հանգամանորեն անդրադառնում է այդ երևույթին: Թերևս այդպիսի մի փորձ կարելի է համարել Յուրի Լոտմանի հաղորդակցության կադապարը:

Տարտու-մոսկովյան դպրոցի հիմնադիրներից է Յուրի Լոտմանը, որն իր արգասավոր աշխատանքով ոչ միայն ոգեշնչել է նշանագետների մի ողջ սերնդի, այլև նրա գաղափարները հիմք են դրել նշանագիտական որոշ ուղղությունների զարգացմանը, ինչպիսիք են, օրինակ՝ «Մշակույթի նշանագիտությունը» և «Տարտուի թարգմանության նշանագիտական դպրոցը» (Kourdis, 2015, p. 310):

Յ. Լոտմանն իր աշխատություններում առանձնակի կարևորել է հաղորդակցությունն ու թարգմանությունը՝ վերջինս համարելով հաղորդակցության անբաժանելի մաս:

Լոտմանը հաղորդակցությանը անդրադարձել է դեռևս իր «Տեքստը և լսարանի կառուցվածքը» [Текст и структура аудитории] (1977) հոդվածում, որտեղ արդեն անդրադառնում էր հաղորդակցությանն ու անհամաչափությանը, սակայն իր վերջին և խոշոր աշխատություններում է («Մտածող աշխարհների ներսում» [Внутри мыслящих миров] (2014

[1990]) և «Մշակույթ և պայթյուն» [Культура и взрыв] (1992)) հանգամանորեն ձևակերպել հաղորդակցության մասին իր մոտեցումները՝ հիմնվելով Ֆերդինանդ դը Սոսյուրի և Ռոման Յակոբսոնի մոտեցումների վրա: Լոտմանն ընդգծում է Սոսյուրի ավանդը նշանագիտության մեջ՝ առանձնացնելով նրա երկատումները, որտեղ լեզվի և խոսքի երկատման մեջ նա լեզուն փոխարինում է կողով, իսկ խոսքը՝ տեքստով (Лотман, 2014, с. 11):

Բնականաբար հասկանալի է, որ հաղորդակցության և ոչ մի կաղապար ունակ չէ նկարագրելու հաղորդակցություն երևույթի բուն էությունը, և այստեղ տեղին է հիշել հաղորդակցության մասին Պոլ Կոբլիի և Պիտեր Զ. Շուլցի նկատառումը, որ ցանկացած կաղապար տվյալ իրականության բնութագրի որոշ հատվածն է ներկայացնում, բայց ոչ բոլորը (Cobley & Schulz, 2013, pp. 7–8): Եվ այդպիսով, կարելի է հետևություն անել, որ հաղորդակցության նկարագրումը կարող է միայն *ad hoc* բնույթ կրել՝ բավարարելով տվյալ գիտակարգի կամ տվյալ հետազոտական մեթոդի որևէ պահանջ: Եվ այդպիսի մի փորձ է նշանագետ Յուրի Լոտմանի հաղորդակցության կաղապարը, որը յուրովի է նկարագրում հաղորդակցության բնույթը՝ ինքնահաղորդակցության ու թարգմանության միջոցով:

Հաղորդակցության կաղապարն ըստ Յուրի Լոտմանի

Ֆերդինանդ դը Սոսյուրի (2008, էջ 25) հաղորդակցության կաղապարը (կամ խոսքի շրջապատույտը) ներկայացնում է դեմքով իրար նայող երկու հաղորդակիցներ, որոնց ականջները, բերաններն ու ուղեղներն ասես կապված են ինչ-որ լարով: Թեև այն ենթադրում է երկու կողմերի հավասար մասնակցություն խոսքի շրջապատույտում, սակայն, ըստ Չենդլերի և Մունդեյի (2020, p. 463), այն հասցեագրողին ուղղված մոդել է, քանի որ հասցեատիրոջ կամ լսողի ընկալումը ներկայացված է իբրև հասցեագրողի միտքն արտահայտող ելակետային գործընթացի հայելային տարբերակ:

Մինչդեռ Յակոբսոնն (1960, p. 362) իր հաղորդակցության կաղապարը ներկայացրել է լեզվի վեց գործառույթների հիման վրա, դրանք են՝ վերաբերային (referential), հուզական (emotive), հորդորական (conative), մետալեզվական (metalingual), խոսքարկման/կապահաստատական (phatic) և բանաստեղծական (poetic): Յակոբսոնի լեզվի գործառույթների մոդելը առանձնացնում է վեց տարր կամ հաղորդակցման գործոններ, որոնք անհրաժեշտ են հաղորդակցման համար՝ համատեքստ (context), հասցեագրող (ուղարկող) (addresser (sender)), հասցեատեր (ստացող) addressee (receiver), շփում (contact),

ընդհանուր ծածկագիր (common code) և, վերջապես, հաղորդագրություն (message) (Jakobson, 1960, p. 355):

Յակոբսոնի այս կաղապարը հետագայում քննադատվել է նշանագետների կողմից, քանի որ այն վերաբերում է միայն խոսքային հաղորդակցությանը (Greimas & Courtés, 1982, pp. 37–38, Elleström, 2018, p. 6):

Լոտմանը, ի տարբերություն Սոսյուրի, իր հաղորդակցության կաղապարը կառուցում է՝ հենվելով հաղորդումը (կամ տեքստը) ստացողի պահանջներին: Այսպես, Լոտմանը (2014, c. 17-18) գրում է. «Եթե լեզվաբան գիտնականին հետաքրքրում է տեքստից դուրս բերված լեզվի կառուցվածքը, ապա տեղեկատվության սովորական ստացողին հետաքրքրում է տեղեկատվության/հաղորդման բովանդակությունը»: Այնուհետև Լոտմանը ներկայացնում է հաղորդակցության իր կաղապարը, որը, ըստ տրամաբանական հաջորդականության, պետք է ունենա հետևյալ տեսքը՝ Միտք (հաղորդման բովանդակություն) – Լեզվի կողավորող մեխանիզմ – Տեքստ – Լեզվի ապակողավորող մեխանիզմ – Միտք (հաղորդման մեխանիզմ) (Лотман, 2014, c. 18): Ավելին, Լոտմանը (2014, c. 19) նշում է, որ տեքստի ողջ փոխակերպության ընթացքում կա որոշակի միտք, որն անփոփոխ է մնում, իսկ տեքստն ընդամենը «տեխնիկական փաթեթավորում» է:

Սակայն որպեսզի բավականին խրթին հաղորդումն ընկալվի բացարձակ նույնականությամբ, պետք են պայմաններ, որոնք բնական միջավայրում գրեթե անհնար է ունենալ: Լոտմանը գրում է.

[...] դրա համար անհրաժեշտ է, որպեսզի հասցեագրողն ու հասցեատերն օգտվեն ամբողջությամբ նույնական կողերից, այսինքն՝ նշանագիտական առումով նրանք պետք է ներկայանան իբրև միևնույն անձի կրկնօրինակը, քանի որ կողը ներառում է հաղորդման ոչ միայն կողավորման և ապակողավորման երկաստիճան հավաքակազմ, այլև ունի բազմաստիճան ստորակարգություն (Лотман, 2014, c. 20):

«Նույնիսկ միևնույն բնական լեզվի առկայությունը, - շարունակում է նա, - չի ապահովում կողի նույնականությունը, քանի որ անհրաժեշտ է նաև ունենալ միևնույն լեզվական փորձը և հիշողության ծավալի նույնականությունը» (Лотман, 2014, c. 20): Այստեղ հարկ է ընդգծել, որ Լոտմանն իր տեսությունը կառուցել է՝ հաշվի առնելով մշակութային հաղորդակցությունը և հատկապես բանաստեղծական լեզվի ստեղծարար բնույթը, սակայն նա նաև ընդգծում է, որ ստեղծարար գործառույթը լեզվի համընդհանուր հատկանիշն է, իսկ բանաստեղծական լեզուն լեզվի ամենատիպիկ դրսևորումն է՝ որպես այդպիսին (Лотман, 2014, c. 26):

Արդեն իր վերջին՝ «Մշակույթ և պայթյուն» աշխատությունում, Լոտմանը, անդրադառնալով «հաղորդակցություն» հասկացությանը, քննադատում է Յակոբսոնի մոդելը՝ ավելացնելով, որ «լեզու» եզրույթի փոխարինումը «կող» եզրույթով այդքան էլ անվտանգ չէ, որքան կարելի էր կարծել. կողը ենթադրում է արհեստական լեզու, որը հարմար է հրամաններ արձակելու համար, իսկ լեզուն ներկայանում է որպես կող՝ գումարած պատմություն (Plotman, 1992, с. 13): Այսինքն՝ Լոտմանը ենթադրում է, որ Յակոբսոնի կաղապարը թերի է, և այն չի կարող սպառիչ կերպով նկարագրել «հաղորդակցություն» երևույթը, քանի որ լեզուն կող լինելուց զատ, ենթադրում է նաև այդ լեզվով ստեղծված պատմությունը, հաղորդակիցների լեզվական հիշողությունը: Ընդ որում, այսպիսի մոդելը չի կարող նաև արտացոլել մարդու ներքին հաղորդակցությունը, այսինքն՝ մարդու հաղորդակցությունն ինքն իր հետ:

Ինքնահաղորդակցությունը որպես հաղորդակցության փարափեսակ

Լոտմանը նշում է, որ Յակոբսոնի հաղորդակցության կաղապարում պատկերավորման և խոսքային մշակույթի մեխանիզմը ներկայացվում է մեկ կապուղով (канал), սակայն դրանք կարելի է նաև դիտարկել իբրև տեղեկատվության հաղորդման տարբեր կառուցվածք ունեցող կապուղիներ: Եվ որպես լուծում առաջարկում է տեղեկատվության հաղորդման երկու հնարավոր կապուղի՝ «Ես - Նա», որտեղ «Ես»-ը հաղորդող սուբյեկտն է, տեղեկատվության տնօրինողը, իսկ «Նա»-ն՝ օբյեկտը, հասցեատերը: Այստեղ, ըստ Լոտմանի, ենթադրվում է, որ մինչև հաղորդակցության ակտի սկիզբը որոշակի հաղորդում հայտնի է «ինձ», սակայն անհայտ է «ներան» (2014, с. 31):

Լոտմանը (2014, с. 31) պնդում է, որ առաջին կապուղին, այսինքն՝ «Ես» - «Նա»-ն, հնարավոր է նկարագրել միայն դասական մոդելի միջոցով: Եվ հաղորդակցության այս միջոցը գերիշխող է մշակույթում և մեծ մասամբ սովորում է մյուս «Ես» - «Ես» հաղորդակցման միջոցը: Սա այն դեպքն է, երբ սուբյեկտը հաղորդումն ուղարկում է ինքն իրեն, այսինքն՝ պարադոքսալ է, երբ հաղորդումը ուղարկվում է ինքն իրեն, երբ սուբյեկտն ու օբյեկտը միևնույն անձն են:

Լոտմանն ընդգծում է, որ «Ես - Ես» համակարգով տեքստերի փոխանցումը չպետք է դիտարկել միայն այն դեպքերի համար, որտեղ տեքստը կատարում է հուշամարզական գործառույթ (мнемоническая функция): «Ես» - «Ես» համակարգի երկրորդ «Ես»-ը հավասար է երրորդ դեմքին, սակայն տարբերությունն այստեղ այն է, որ «Ես»-«Նա» համակարգում տեղեկատվությունը փոխանցվում է տարածության մեջ, իսկ «Ես» - «Ես» համակարգում՝ ժամանակի մեջ (2014, с. 31):

«Ես»-ից դեպի «Ես» հաղորդման փոխանցումը կատարվում է, երբ, օրինակ, բարձրացվում է հաղորդման տարակարգը/աստիճանը: Ըստ էության՝ սա նշանագիտական փոփոխություն է, որի համար Լոտմանը բերում է այն օրինակը, երբ երիտասարդ բանաստեղծն իր ձեռքն է առնում սեփական ձեռագիր բանաստեղծության տպագրված տարբերակը: Այսինքն՝ փոխադրվելով գծագրական (графический) նշանների նոր համակարգ, որն ունի հեղինակության այլ աստիճան, այն ստանում է որոշակի հավելյալ նշանակություն (Лотман, 2014, с. 32): «Նմանատիպ դեպքեր են, – շարունակում է Լոտմանը, – երբ հաղորդագրության իսկությունը կամ կեղծությունը կախված է այն բանից, թե արդյոք այն արտահայտված է բառերով, թե ենթադրվում է, ասված է, թե գրված, գրված է, թե տպագրված և այլն» (2014, с. 32): Ըստ Լոտմանի՝ «Ես»-«Ես» հաղորդակցության մեկ այլ օրինակ է, երբ մարդն ինքն իրեն է դիմում հուշագրերի տեսքով և ոչ թե հուշամարզման, այլ գրողի ներքին վիճակը պարզաբանելու համար, որն առանց գրառումների չի կարող տեղի ունենալ (2014, с. 32):

Այսինքն՝ եթե «Ես» - «Նա» հաղորդակցական համակարգը ապահովում է միայն տեղեկատվության հաստատուն ծավալի փոխանցում, ապա «Ես»-«Ես» կապուղում տեղի է ունենում տեղեկատվության որակի փոփոխություն, որն էլ բերում է այդ «Ես»-ի վերակառուցման (перестройка)(Лотман, 2014, с. 33):

Ինքնահաղորդակցման առաջին տարբերակիչ հատկանիշը «Ես» - «Նա» համակարգից այն է, որ ինքնահաղորդակցման ժամանակ տեղի է ունենում տվյալ լեզվի բառերի կրճատում, իսկ հասցեատերը հասկանում կամ ապակողավորում է հաղորդումը, քանի որ նա արդեն քաջատեղյակ է այդ հաղորդմանը: Իսկ բառերն այդպիսի գրառման մեջ հանդես են գալիս որպես գործակիցներ (ինդեքսներ), որոնք կարելի է գուշակել, միայն եթե նախապես հայտնի է, թե ինչ է գրված:

Ավելին, ինքնահաղորդակցությունն ունի նաև հուշամարզական գործառույթ. սա այն դեպքն է, երբ գրառումները ծառայում են որպես հիշեցում: Ինքնահաղորդակցությունը կարող է տեղի ունենալ այն դեպքերում, երբ «Ես»-ը հավաքական է. սա տեղի է ունենում գաղտնագրերի հաղորդման ժամանակ, երբ գաղտնագիրը հայտնի է միայն մարդկանց որոշակի խմբի: Այս առումով Լոտմանը գրում է, որ այսպիսի հաղորդակցությունը կառուցվում է հայտնի բանաձևի հիման վրա՝ «Հասկանալի է միայն նրանց, ում հասկանալի է» (2014, с. 40): Եվ վերջապես, Լոտմանը նշում է, որ ինքնահաղորդակցությունը կարող է լինել նաև մաքուր վիճակում՝ առանց հուշամարզական և դավադրական գործառույթների: Եվ այն կարող է դրսևորվել իբրև մտքերի գրառում, և

որպես օրինակ բերում է Պուշկինի ֆրանսերեն գրառումը իր սիրելիի՝ «Olenina Annette»-ի մասին՝ գրաշրջության (անագրամի) տեսքով:

ettenna eninelo

eninelo ettenna (Плотман, 2014, с. 41).

Ինքնահաղորդակցությունը երբեմն կարող է նաև քողարկված լինել: Այսպես, աղոթքը կարող է ընկալվել ոչ թե որպես հաղորդակցություն ինքն իր հետ, այլ շփում արտաքին հզոր ուժի հետ, կամ էլ միևնույն տեքստի կրկնակի ընթերցումը կարող է ընկալվել որպես շփում այդ տեքստի հետ: «Այստեղ, - նշում է Լոտմանը (2014, с. 45), - հասցեատերն է որոշում, թե ինչպիսի գործառույթ է իրականացնում տեքստը, այսինքն՝ այն կող է, թե հաղորդում»: Այստեղ ևս ի հայտ է գալիս Լոտմանի հաղորդակցության մոդելի ուղղվածությունն առ հասցեատերը, քանի որ այն ենթադրում է, որ հասցեատերը պետք է որոշի, թե ինչ գործառույթ է կատարում իրեն ուղղված տեքստը: Տեքստին նաև միաժամանակ վերագրվում է և՛ հաղորդագրության, և՛ կողի գործառույթ: Սակայն տեքստը գործածվում է ոչ թե որպես հաղորդում, այլ որպես կող այն դեպքում, երբ տեքստը ոչ մի նոր տեղեկույթ չի հաղորդում արդեն ունեցած տեղեկության մասին, այլ փոխակերպում է այդ տեքստը սերողի, ստեղծողի ինքնաընկալումը և արդեն առկա հաղորդումը տեղափոխում է նշանակությունների նոր համակարգ: Այստեղ Լոտմանը (Плотман, 2014, с. 46) նշում է, որ եթե որևէ ընթերցողուհու հաղորդում են, որ Աննա Կարենինա անունով ինչ-որ կին դժբախտ սիրուց դրդված նետվել է գնացքի տակ, ապա ընթերցողուհին ինքն իրեն կճանաչի այդ հաղորդման մեջ և կսկսի վերաիմաստավորել իր ինքնաընկալումն ու հարաբերությունները որոշ մարդկանց հետ, քանի որ նա գտնում է, որ «Աննա Կարենինան ես եմ»: Այստեղ է, որ տեքստը հանդես է գալիս որպես կող, այլ ոչ թե հաղորդում:

Լոտմանն ընդգծում է, որ իր տեսությունը կառուցել է գեղարվեստական գրականության հիման վրա, սակայն այն կարող է կիրառվել նաև այնպիսի տեքստերի համար, ինչպիսիք են ասացվածքը, կրոնական և բարոյական առակը, առասպելը: Լոտմանը գրում է.

Հարկանշական է, որ ասացվածքների մեջ կրկնությունները ներթափանցել են այն ժամանակ, երբ դրանք դեռևս չէին ընկալվում իբրև գերազանցապես գեղագիտական գործառույթ, այլ ավելի շարունակին հուշամարզական կամ էլ բարոյա-նորմատիվ գործառույթ (2014, с. 47):

Գեղագիտական էֆեկտը առկայանում է այն ժամանակ, երբ կողը գործածվում է որպես հաղորդում, իսկ հաղորդումը՝ որպես կող, այսինքն՝ երբ տեքստը հաղորդակցման մեկ համակարգից անցնում է մյուսը՝

լսարանի գիտակցության մեջ պահպանելով կապն այդ երկու համակարգի հետ (Лотман, 2014, с. 48):

Լոտմանը նշում է, որ թե՛ գեղարվեստական տեքստերը և թե՛ մշակույթն ընդհանուր առմամբ կառուցվում են այդ երկու համակարգերի միջև ճոճանակի պես տատանումների սկզբունքի հիման վրա: Եվ այն մշակույթները, որոնք ուղղված են դեպի հաղորդումը, ավելի դինամիկ են, քանի որ ունակ են տեքստերի քանակը անսահմանորեն ավելացնել և գիտելիքի աճ ապահովել:

Լոտմանի հաղորդակցության կաղապարը թարգմանաբանության լույսի ներքո

Թարգմանության տեսության ավանդական խնդիրներից է եղել իմաստ առ իմաստ կամ բառ առ բառ թարգմանության երկընտրությունը: Ինչպես հայտնի է, առաջինը՝ իմաստ առ իմաստ մոտեցումը, առավել տարածված էր հռոմեացիների մոտ, իսկ բառ առ բառ մոտեցումն ավելի ընդունված էր աստվածաշնչի թարգմանիչների մոտ: Իհարկե, նրանցից յուրաքանչյուրը հետապնդում էր որոշակի նպատակ՝ աստվածաշնչի թարգմանության ժամանակ լինել հնարավորինս մոտ բնագրին, կամ էլ փոխանցել իմաստը՝ հնարավորինս մոտ լինելով թիրախ հանրույթի պահանջներին. սա էլ բնորոշ էր հռոմեացիներին: Այս մոտեցումներն էլ մեծ մասամբ ձևավորել են թարգմանությամբ զբաղվողների ու թարգմանության տեսաբանների հետագա բանավեճերի ընթացքը: Ինչևէ, միջմշակութային հաղորդակցության զարգացմանն ու ծավալմանը զուգահեռ՝ ամենահաս տեխնոլոգիական միջոցների բուռն առաջադիմության պայմաններում սկսվել են վերաիմաստավորվել ու փոփոխվել թարգմանության մասին պատկերացումները: Սա է թերևս այն պատճառը, որ թարգմանությունը սկսել է դիտարկվել որպես հաղորդակցության միջոց և դրա անքակտելի մասնիկը: Թարգմանության տեսության սահմանների ընդլայնման մասին գաղափարները արտացոլվել են թարգմանության տարբեր անթլոգիաներում (օրինակ՝ Venuti, 2021, Baker, 2009): Այսպես, Ռայներ Շուլտեի և Ջոն Բիգենետի խմբագրությամբ լույս տեսած «Թարգմանության տեսություններ» անթլոգիայի ներածությունում թարգմանության մասին այնտեղ զետեղված քաղվածքների ու հոդվածների վերլուծությունից հետո թարգմանության սահմանների ընդլայնմանը տրվում է այսպիսի ձևակերպում. « ... թարգմանական մտածողությունը հիմնադրույթային է մարդկային հաղորդակցության բոլոր գործողությունների համար, և իսկապես, հաղորդակցման բոլոր գործողությունները թարգմանական գործողություններ են (acts of translation)» (Biguenet & Rainer, 1992, p. 6):

Ուշագրավ են նաև թարգմանության մասին այդտեղ զետեղված որոշ գաղափարներ, որոնք թարգմանությունը դիտարկում են հաղորդակցության տեսանկյունից: Եվ այսպես, Օկտավիո Պազը (Paz, 1992, p. 152) նշում է, որ խոսել սովորելուն համընթաց մենք սովորում ենք թարգմանել. «Երեխան, որ հարցնում է մորը որևէ բանի իմաստը, նա իրականում խնդրում է իրեն թարգմանել անծանոթ տերմինը իրեն ծանոթ ավելի պարզ բառերով»: Պազն ավելացնում է, որ այս իմաստով միևնույն լեզվում կատարվող թարգմանությունը էապես չի տարբերվում երկու լեզուների միջև կատարվող թարգմանությունից: Այնուհետև խմբագիրները հիշատակում են գերմանացի փիլիսոփա Հանս-Գեորգ Գադամերին, որը նշում է, որ կարդալն արդեն թարգմանություն է, իսկ թարգմանությունը թարգմանություն է երկրորդ անգամ (Biguenet & Rainer, 1992, p. 9): Եվ վերջապես, Հանս Էրիխ Նոսակը ընդգծում է, որ «... գրելն ինքնին, ի վերջո, արդեն թարգմանություն է» (Nossack, 1992, p. 232):

Բնականաբար թե՛ գրելը, թե՛ կարդալը և թե՛ թարգմանելը հաղորդակցության տարատեսակներ են, սակայն, թարգմանությունը որպես հաղորդակցական գործընթաց համարելուն առարկում է Անտուան Բերմանը, որը կարծում է, որ փոխաբերական առումով գործածված տեխնոլոգիային վերաբերող այդ բառիմաստը ծանրավուն է ընկալվում, քանի որ հաղորդակցությունը նույն հարթակի վրա է դնում տեխնիկական տեքստն ու ստեղծագործությունը, քանի որ երկուսն էլ համարվում են հաղորդում, որ հասցեագրողն ուղարկում է հասցեատիրոջը (Berman, 1999, p. 70): Սակայն այս առումով կարելի է չհամաձայնվել Բերմանի հետ, քանի որ թարգմանությունը, ինչպես տեսանք, ոչ միայն հաղորդակցության մասնիկ է, այլ նաև հաղորդակցությունն ինքնին թարգմանություն է, և ի տարբերություն հաղորդակցման այլ կաղապարների՝ Յուրի Լոտմանը հաղորդումը փոխարինել է տեքստով, որտեղ կարևոր դեր ունի մշակութային հիշողությունը: Եվ ինչպես սկզբում նշվեց, թարգմանությունն ու հաղորդակցությունը Լոտմանի համար կարևոր են և անքակտելի: Ավելին, Լոտմանը գտնում է, որ մտածական տարրական գործողությունը (ակտը) թարգմանություն է, իսկ թարգմանության տարրական մեխանիզմը՝ երկխոսություն: Այս առումով Լոտմանը գրում է.

Երկխոսությունը ենթադրում է անհամաշափություն, իսկ անհամաշափությունն արտահայտվում է նախ՝ երկխոսության մասնակիցների նշանագիտական կառուցվածքի (լեզվի) փոքրբերությանը, և երկրորդ՝ հաղորդումների փոփոխական ուղղվածությամբ: Վերջինից հետևում է, որ երկխոսության մասնակիցները հերթափոխով «հաղորդման» (передача) դիրքից

անցնում են «ընդունման» (првем) դիրքի, և հետևաբար, հաղորդումն արվում է գաղտնի բաժիններով (порция), իսկ դրանց միջև առկա են դադարներ (Лотман, 2014, с. 206):

Լոտմանն իր միտքը շարունակում է՝ ասելով, որ եթե առանց նշանագիտական տարբերության երկխոսությունն անիմաստ է, ապա բացառիկ և բացարձակ տարբերության դեպքում այն անհնար է, քանի որ անհամաչափությունը ենթադրում է անփոփոխայնություն/հաստատունություն (инвариантность) (Лотман, 2014, с. 206): Ընդ որում, երկխոսության համար անհրաժեշտ է, որ իրավիճակի մասնակիցները հաղորդակցություն իրականացնելում փոխադարձաբար հետաքրքրված լինեն, ինչպես նաև ունենան կարողություն՝ հաղթահարելու նշանագիտական անխուսափելի խոչընդոտները:

Հարկ է ընդգծել նաև, որ Լոտմանը կարծում է, որ արհեստական լեզուները կաղապարավորում են ոչ թե լեզուն որպես այդպիսին, այլ նրա գործառույթներից մեկը՝ նույնական հաղորդման փոխանցման ունակությունը: Ընդ որում, լեզվի մյուս գործառույթը, ըստ Լոտմանի, դրա ստեղծարար բնույթն է: «Ցանկացած համակարգ, որն իրականացնում է նշանագիտական հնարավորությունների ողջ շարքը, ոչ միայն փոխանցում է պատրաստի հաղորդումներ, այլ նաև ծառայում է որպես նորերի գեներատոր», – գրում է նա (2014, с. 21): Այս առումով նա նշանակալի է համարում այն, որ գեղարվեստական տեքստերի հակառակ թարգմանությունը երբեք չի տալիս ելակետային (исходный) տեքստին նույնական տեքստ: Լոտմանն ընդգծում է. «Եթե L_1 լեզվի T_1 տեքստի թարգմանությունը L_2 լեզվում առաջացնում է նմանատիպ T_2 տեքստ, և եթե հակառակ թարգմանության դեպքում ստանում ենք T_1 տեքստը, ապա T_2 տեքստը չենք համարի նոր տեքստ T_1 -ի համեմատ» (2014, с. 21):

Լոտմանն իր վերջին աշխատությունում կրկին անդրադառնում է թարգմանությանն ու հաղորդակցությանը՝ շարադրելով մտքերն ավելի հստակ ու մատչելի: Եվ ուրեմն, ըստ նրա՝ նորմալ մարդկային շփման ժամանակ, ավելին, լեզվի նորմալ գործունեությունում դրված է խոսողի ու լսողի սկզբնապես ոչ նույնական լինելը և այս պայմաններում սովորական է խոսողի ու լսողի լեզվական տարածքների հատումը (Лотман, 1992, с. 14): Այն դեպքում, երբ հատում տեղի չի ունենում, շփումն անհնար է, իսկ լեզվական տարածքների կատարյալ հատումը կամ խոսողի ու լսողի նույնական լինելը շփումը դարձնում է անբովանդակ: Մինչդեռ երկխոսության արժեքը կախված է ոչ թե իմաստային այն հատվածից, որտեղ հատվում են խոսողի ու լսողի լեզվական տարածքները, այլ այն

հատվածներից, որտեղ դրանք չեն հատվում, բայց որոնց միջև կատարվում է տեղեկույթի փոխանակում: Լոտմանը նշում է.

Այսպեղ հանդիպում ենք անլուծելի հակասության. մենք շահագրգռված ենք հաղորդակցվելու հենց այն ոլորտում, որը բարդացնում է հաղորդակցությունը և, ըստ էության, այն դարձնում անհնարին: Ավելին, որքան դժվար և ոչ ադեկվատ է տարածության մի չհատվող հատվածի թարգմանությունը մյուսի լեզվով, այնքան այս պարադոքսալ հաղորդակցության փաստը տեղեկատվական և սոցիալական առումով դառնում է արժեքավոր: Կարելի է ասել, որ անթարգմանելի թարգմանությունն իր հերթին կարող է դառնալ բարձր արժեք ունեցող տեղեկատվության կրողը (Лотман, 2014, с. 15):

Իր այս միտքը Լոտմանը պարզաբանում է հետևյալ կերպ. հարաբերականորեն իրար մոտ լեզուների միջև թարգմանությունը հարաբերականորեն հեշտ կլինի, իսկ այն դեպքում, երբ լեզուները սկզբունքորեն իրարից տարբերվում են, թարգմանությունը կլինի դժվար ու կհանգեցնի իմաստային անորոշության: Երկրորդ դեպքում Լոտմանը նկատի ունի միջնշանակարգային/միջնշանագիտական (intersemiotic) թարգմանությունը, երբ, ասենք, բանաստեղծությունը թարգմանվում է երաժշտության:

Եվ ուրեմն, հարկ է ընդգծել, որ Լոտմանի հաղորդակցության կաղապարը հնարավորություն է տալիս նկարագրելու թարգմանությունը որպես գործընթաց: Իհարկե, թարգմանությունը որպես հաղորդակցություն դիտարկելը նորություն չէ, և կան բազմաթիվ տեսություններ, որոնք այս կամ այն կերպ անդրադարձել են խնդրին, սակայն այդ մոտեցումներն, օրինակ, չեն նկարագրում թարգմանությունը հաղորդակցության տեսանկյունից, այլ առաջարկում են դիտարկել թարգմանությունն իբրև հաղորդակցական կաղապար, ըստ որի՝ կարևոր է ելակետային լեզվից վեր հանել միայն իմաստային կողմը (օր.՝ Миньяр-Белоручев, 1996): Ավելին, Լոտմանի առաջարկած կաղապարը թերևս միակն է, որում նկարագրվում է թարգմանությունը որպես ոչ միայն միջլեզվական հաղորդման փոխանակում, այլ նաև՝ ընդգծվում է թարգմանության՝ իբրև երկխոսության դերը, որն ավելի կարևոր է նշանագիտական համակարգերի միջև տեղի ունեցող փոխանակությունների արդի դարաշարջանում, երբ գիրքը թարգմանվում է պաստառի, կինոյի, կամ կոմիքսի, կտավի և հակառակը: Եվ սա է թերևս պատճառը, որ գիտնականը նշում է, որ թարգմանության տեսանկյունից ավելի արժեքավոր են այն դեպքերը, երբ թարգմանություն կոչվող երկխոսությունը տեղի է ունենում այն ժամանակ, երբ լեզվական տարածքները չեն հատվում, բայց տեղի է ունենում տեղեկույթի

փոխանակում: Այստեղ, իհարկե լեզուն պետք է ավելի լայն հասկանալ՝ իբրև մի համակարգ, որն ունի իր կանոնները, օրինակ՝ բնական լեզու, կինոյի լեզու և այլն:

Իհարկե, հասկանալի է, որ Լոտմանը, լինելով նշանագետ ու գրականագետ, իր կաղապարի հիմքում նկատի է ունեցել մշակույթը, որն իր մեջ ներառում է լեզուն ու հիշողությունը, և այդ հիշողության վերափոխումները ժամանակի ու տարածքի կտրվածքում: Եվ հենց սա էլ կարևոր է ընդգծել ու մեկ անգամ ևս կրկնել, որ Լոտմանի հաղորդակցության կաղապարն ամենևին էլ տեխնիկական բնույթի զուտ տեղեկույթի փոխանցման մասին չէ, այլ՝ ստեղծագործական, հուշամարզական հաղորդակցությունը կաղապարելու, ինչպես նաև երբեմն հակադիր, իրար հետ չհատվող տարածքների միջև տեղեկույթի փոխանցումը նկարագրելու մասին, որում կարևոր դեր ունի թարգմանությունը, առանց որի այս ամենը դժվար թե միս ու արյուն ստանա:

Եզրակացություն

Հաղորդակցությունը մարդու առօրյայում ունի շատ կարևոր դեր, և թերևս դա է պատճառը, որ այն ցանկացել են նկարագրել, ներկայացնել կաղապարների միջոցով: Եվ չնայած այդ փորձն առաջին անգամ ձեռնարկվել է տեխնիկական ինֆորմացիա փոխանցելու համար, անհերքելի է, որ հաղորդակցությունն ավելին է, քան զուտ տեխնիկական, ոչ երկիմաստ ինֆորմացիայի փոխանցումը: Հաղորդակցությունն այսօր, կարելի է ասել, մոտեցել է իր նախնական իմաստին. այն է՝ մոտեցնել հակադիր կողմերը, մոտեցնել իրարից հեռու գտնվող մարդկանց: Սակայն սրան ավելանում են նաև տեխնոլոգիական միջոցները, տեխնիկական բառապաշարը, որն էլ իր արտացոլումն է գտել նշանագետ, մշակութաբան Յուրի Լոտմանի աշխատություններում:

Լոտմանի հաղորդակցության տեսությունը, հենվելով Սոսյուրի ու Յակոբսոնի տեսություններին, նորովի է ներկայացնում հաղորդակցությունը՝ այնտեղ շեշտելով հաղորդումը ստացողի դերը, քանի որ վերջին հաշվով հաղորդակցությունը դինամիկ գործընթաց է, և դրա յուրաքանչյուր մասնակցի դերը կարևոր է այն իրագործելու համար: Ավելին, յուրաքանչյուրի տեսնակյունից հաղորդման վերլուծությունն անհրաժեշտ է՝ հասկանալու հաղորդակցություն երևույթի ծավալը, դրա գերազնահատված ու թերազնահատված կամ անտեսված կողմերը:

Հիշարժան է նաև Լոտմանի մոտեցումը թարգմանության դերին՝ որպես հաղորդակցության անբաժանելի մասի, քանի որ թարգմանությունը նշանագիտական տեսանկյունից ենթադրում է մեկ

նշանային համակարգի ապակողավորում մյուս նշանային համակարգի միջոցներով, ինչն էլ հենց հաղորդակցությունն է:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ REFERENCES

1. Baker, M. (Ed.). *Critical Readings in Translation Studies*. Routledge. 2009
2. Berman, A.. *La Traduction et la Lettre ou l'Auberge du lointain*. Seuil. 1999
3. Biguenet, J., & Rainer, S. (Eds.). *Theories of Translation: An Anthology of Essays from Dryden to Derrida*. University of Chicago Press. 1992.
4. Chandler, D., & Munday, R. A Dictionary of Media and Communication. In *A Dictionary of Media and Communication*. Oxford University Press. 2020.
5. Charaudeau, P., & Maingueneau, D. *Dictionnaire d'analyse du discours*. Seuil. 2002.
6. Cobley, P., & Schulz, P. J. (Eds.). *Theories and Models of Communication*. De Gruyter Mouton. 2013.
7. Elleström, L. A medium-centered model of communication. *Semiotica*, 2018(224), 1–25. <https://doi.org/10.1515/sem-2016-0024>. 2018.
8. Greimas, A. J., & Courtés, J. *Semiotics and Language*. Indiana University Press. 1982.
9. Jakobson, R. Linguistics and Poetics. In T. Sebeok (Ed.), *Style in Language* (pp. 350–377). Massachusetts Institute of Technology Press. 1960.
10. Kourdis, E. Semiotics of translation: An interdisciplinary approach to translation. In P. Trifonas (Ed.), *International Handbook of Semiotics* (pp. 303–320). Springer Netherlands. 2015. https://doi.org/10.1007/978-94-017-9404-6_13
11. Nossack, H. E. No Title. In R. Schulte & J. Biguenet (Eds.), *Theories of translation* (pp. 228–238). The University of Chicago Press. 1992.
12. Paz, O. Translaion: Literature and Letters. In R. Schulte & J. Biguenet (Eds.), *Theories of translation* (pp. 152–162). The University of Chicago Press. 1992.
13. Venuti, L. (Ed.). *The Translation Studies Reader* (4th ed.). Routledge. 2021.
14. Лотман, Ю. Текст и структура аудитории. *Труды По Знаковым*

- Системам, IX, 55–61, 1977.*
 Lotman, Ju. Tekst i struktura auditorii. Trudy Po Znakovym Sistemam, IX, 55–61, 1977. (in Russian).
15. Лотман, Ю. *Культура и взрыв*. Гнозис, Lotman, Ju. Kul'tura i vzryv. Gnozis: 1992. (in Russian).
 16. Лотман, Ю. *Внутри мыслящих миров*. Азбука, 2014. Lotman, Ju. Vnutri mysljashhih mirov. Azbuka, 2014. (in Russian).
 17. Миньяр-Белоручев, Р. *Теория и методы перевода*, 1996.
 18. Min'jar-Beloruchev, R. Teorija i metody perevoda 1996. (in Russian).
 19. զը Սոսյօւր, Ֆերդինանդ. *Ընդհանուր լեզվաբանութեան դասընթաց*. Սարգիս Խաչենց-Փրինթինգ, 2008. dy' Sosyowr, Ferdinand. Y'ndhanowr lezvabanowt'yan dasy'nt'ac. Sargis Xachenc-P'rint'info, 2008. (In Armenian).

МКРТЫЧ МКРТЧЯН - КОММУНИКАТИВНЫЙ АСПЕКТ ПЕРЕВОДА В СВЕТЕ ТЕОРИИ КОММУНИКАЦИИ ЮРИЯ ЛОТМАНА

Ключевые слова: *Юрий Лотман, коммуникация, автокоммуникация, перевод и культура, Московско-тартуская семиотическая школа.*

В данной статье предпринята попытка описать роль и место перевода в теории коммуникации Юрия Лотмана, сооснователя Тартуской-Московской семиотической школы. В статье показаны особенности понятия «коммуникация» в трудах Лотмана, представлены теории, способствующие формированию этого понятия, а также подчеркнута своеобразие концепции Лотмана о «коммуникации», ее сходство с концепцией коммуникации Фердинанда де Соссюра и Романа Якобсона, а также имеющиеся отличия. В статье подробно рассматриваются коммуникативные модели общения «Я-Он» и «Я-Я», предложенные Лотманом, их особенности, а также возможная сфера применения данных коммуникативных моделей. В статье также подчеркивается роль автокоммуникации в коммуникативной модели Лотмана и возможных форм ее проявления. Кроме того, делается упор на роль диалога и перевода в Лотмановской концепции коммуникации. В частности, выдвигается тезис о том, что коммуникация для Лотмана является разновидностью перевода, его своеобразным проявлением и неотъемлемой частью.

MKRTICH MKRTCHYAN - COMMUNICATIVE ASPECT OF TRANSLATION FROM THE PERSPECTIVE OF JURI LOTMAN'S THEORY OF COMMUNICATION

Keywords: *Juri Lotman, communication, autocommunication, translation and culture, Tartu-Moscow Semiotic School.*

This article is an attempt to describe the role of translation in the concept of communication in the works of Juri Lotman, co-founder of the Tartu Moscow Semiotic School. This article attempts not only to show the features of the concept of communication in the works of Juri Lotman, but also to refer to the theories that contributed to the formation of this concept, as well as to emphasize the originality of Lotman's concept of communication, its similarities, and differences in comparing the concepts of communications of Ferdinand de Saussure and Roman Jakobson. The article discusses the communicative models of communication "I-S/He" and "I-I", proposed by Lotman, their features, as well as the possible scope of these communicative models. This article also emphasizes the role of autocommunication in Lotman's communicative model and its possible forms of manifestation. In addition, a separate emphasis is placed on the role of dialogue and translation in Lotman's concept of communication. In particular, it is put forward that communication for Lotman is a kind of translation, a kind of manifestation of translation, which is its integral part.

Ներկայացվել է՝ 04.10.2023 թ.
Գրախոսվել է՝ 20.11.2023 թ.